ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»-Ի ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

04 սեպտեմբերի 2023թ. ք. Գավառ

Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Գավառ քաղաք թիվ 3 հասցեում գտնվող 0.36328 հա մակերեսով հողատարածքի համար սահմանվում է մրցույթի հետևյալ պայմանները՝

- հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների.
- – հողամասի գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված.
- հողամասի չափը՝ 0.36328 հա,
- հողամասի կառուցապատման ժամկետը՝ 10 տարի.
- հողամասը գտնվում է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ Գավառ համայնք թիվ 3 հասցեում.
- հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 05-001-0814-0018.
- հողամասի վճարի մեկնարկային չափը կազմում է՝ տարեկան 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ.
- հողամասի օգտագործման նպատակը՝ զրուցարաններ, շարժական առևտրի և սպասարկման տաղավարներ տեղադրելու,
- հողամասին կից առկա է՝ գյուղ նշանակության հողեր.
- հողամասը գտնվում է՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսքերի ցանկում.
- հողամասի նկատմամբ սերվիտուտներ առկա չեն.
- հողամասի նկատմամբ բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ այն պետք է օգտագործվի բացառապես զրուցարաններ, շարժական առևտրի և սպասարկման տաղավարներ տեղադրելու նպատակով.
- հողամասի նկատմամբ լրացուցիչ այլ պահանջներ ու պայմաններ՝ չկան.

Մրցույթում լավագույն պայմանները ճանաչելու և մրցույթի մասնակիցների կողմից մրցութային պայմանների բավարարման աստիճանը գնահատելու նպատակով համայնքի ղեկավարի կողմից սահմանվել է մրցութային պայմանները միասնական կշռային գործակցով գնահատելու մեթոդ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Գավառ քաղաք թիվ 3 հասցեում գտնվող, 05-001-0814-0018 կադաստրային ծածկագրով 0.36328 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասը՝ զրուցարաններ, շարժական առևտրի և սպասարկման տաղավարներ տեղադրելու նպատակով, 10 տարի օգտագործման ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համար Գավառի համայնքապետարանը հայտարարում է՝ բաց մրցույթ, որը կկայանա 2023 թվականի Հոկտեմբերի 20-ին Գավառի համայնքապետարանի նիստերի դահլիճում /Գր.Լուսավորիչի 12/, ժամը 11.00-ին:

Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանված է 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ: Հողամասի տարածքում ճանապարհներ, ջրատար, կոյուղի, էլ. հաղորդման գծեր, գազատարներ առկա չեն:

Մրցույթին մասնակցության ձևակերպումն իրականացվում է հետևյալ փաստաթղթերի ներկայացմամբ.

- մասնակցության հայտ,
- մասնակցի անձնագրի և սոց քարտի լուսապատճենները,
- մասնակցության վճարի անդորագրի կրկնօրինակը /մեկնարկային գնի 1 տոկոսը, բայց ոչ պակաս 2000 ՀՀ դրամ/: Վճարումը պետք է կատարվի Գավառի համայնքապետարանի 900175101204 հաշվեհամարին:

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

Մրցույթի նախավճարը /մեկնարկային վարձավճարի 5 տոկոսի չափով/ վճարվում է մրցութի անցկացման օրը՝ մինչև մրցույթը, Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին, եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվումէ նրան:

Մրցույթում հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը: Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Մրցույթում հաղթած անձը արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում էմրցույթը չկայանալու պարագայում հողամասն առաց մրցույթի կառուցապատման իրավունքից

Հողամասը սահմանափակումներ /սերվիտուտներ/ չունի: Այն ուսումնասիրելու, մրցույթի կանոնակարգին, մրցույթի պայմաններին ու պահանջներին ծանոթանալու համար կարող են դիմել ցանկացած օր,ժամը 9.00-ից մինչև 18.00-ն:

ՄՐՑՈՒ ՑԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ